ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<23>> դեկտեմբերի 2024թ. N ՄՈ/566 -Ա

ք. Արմավիր

«ԱՊԱԳԱՅԻ ՀՈՎՍԵՓ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԽԻԹԱՐ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մխիթար Մխիթարյանի 2024 թվականի նոյեմբերի 27-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մխիթար Մխիթարյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործված մասը՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 13-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մխիթար Մխիթարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Իսկուհի Հակոբյանին:

3. «Ապագայի Հովսեփ Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Իսկուհի Հակոբյանի աշխատավարձի վճարումը 2024 թվականի դեկտեմբերի 2-ից 13-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մխիթար Մխիթարյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի դեկտեմբերի 16-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ **Խ. ՄԿՐՏՉՅԱՆ**